

ՀՀ Արմավիրի մարզի Արագածի գյուղական
համայնքի ղեկավար Մ. Հարությունյան

2013թ. 2-րդ կիսամյակի և տարեկան կատարած աշխատանքների

Հաշվետվություն

Մասնակցությամբ՝ ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և ՀԳՄՏԾ, գործունեության համակարգման
վարչության պետ՝ Ա. Ղուկասյանի, համայնքի ավագանու և 72 համայնքի բնակիչների.

17.01.2014թ.

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արագածի գյուղական համայնքի ղեկավարը
ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական
ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական ինքնակառավարման մասին», «Իրավական ակտերի
մասին», ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և գյուղապետարանի
ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն
վերապահված իրավասությունների շրջանակներում՝ իր լիազորությունները:

2013թ. գյուղապետարանի աշխատանքային ծրագրի հիմքում դրված են եղել գյուղի
սոցիալ-տնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը՝ համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացումն է, որին հասնելու
ճանապարհին սահմանվել են կարևորագույն սոցիալ-տնտեսական խնդիրները, որոնք էլ
անհրաժեշտություն է եղել լուծելու 2013թ. 2-րդ կիսամյակի ընթացքում: Այդ խնդիրների լուծման
համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի
աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը և համայնքի
խնդիրների լուծմանն աջակից լինելու պատրաստակամությունը, որի արդյունքում արձանագրվել է
որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում են շեզ:

ԳՅՈՒՂԱՄՆՄԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՆ

Գյուղապետը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների
իրականացմանը, ինչպես նաև գյուղ. մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվում ոռոգման ջրի մատակարարման, ինչպես նաև կազմակերպվում
է աշնանացան հացահատիկի վարի և ցանքսի աշխատանքների:

Գյուղն ունի իր առանձնահատկությունները:

Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Կան նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են՝

1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից

2. Մեխանիզացիայի պակասությունը

Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքներին,
գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների դեմ պայքարի աշխատանքներին և պարբերաբար
կատարվում է ներտնտեսային ոռոգման ցանցի մաքրման աշխատանքները:

Մարզպետարանից համայնքին հատկացվել է 105տոննա ազոտական սիլիտրա և 39870 լիտր դիզելային
վառելանյութ:

Անմիջական հսկողություն է իրականացվում անասնաբուժական ծառայության գործում՝ ժամանակին
կատարվում է բոլոր հակահամաճարաբային միջոցառումները, կենդանիների հիվանդությունների
կանխարգելման ուղղությամբ: Կենդանիների շրջանում չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:

Հետևողական և սիստեմատիկ հսկողություն է սահմանվում հանձնաժողովի կողմից առևտրի,
հասարակական սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում գործող օբյեկտների գործունեության
վրա: Ներկայումս համայնքում գործում է 4 առևտրի ծառայության օբյեկտները:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման, ինչպես նաև ընդերքօգտագործման վրա:
Ամենօրյա աշխատանք է տարվում հողօգտագործողների հետ հողի հարկի, գույքահարկի գծով զոյացած ապառքների հավաքագրման ուղղությամբ:

ԸՄՂԱԸՍՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՍՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական գործունեության նկատմամբ:
Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել է հողամասերի չափագրման և սահմանների ճշգրտման աշխատանքներ, տրվել են ճշտված իրավիճակային հատակագծեր:
Միսենատիկաբար կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ:
Սահմանվում է հսկողություն խմելու ջրի որակի, ինչպես նաև վարակազերծման նկատմամբ:
Միսենատիկաբար, ամիսը 2 անգամ կատարվում է աղբահանություն, այդ նպատակով հատկացված է և վճարվել է 2013թ. համայնքի բյուջեից 1245.0հազար դրամ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ, ՍՊՈՐՏԻ, ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 միջնակարգ դպրոց:

Աշակերտների թիվը 264

Աշխատողների թիվը 38-ը, որից՝ ուսուցիչներ՝ 33:

Գյուղապետարանի ուշադրության կենտրոնում է դպրոցը: Կրթության որակը գտնվում է բարձր մակարդակի վրա: Նախադպրոցական 2 խմբերի համար համայնքի բյուջեից 2535.4հազ. դրամ սուբսիդիա է հատկացվել խմբերի գործունեության պահպանման վրա:

Գյուղապետարանի նախաձեռնությամբ կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ մարտի 8-ի, մայիսի 9-ի, մայիսի 28-ի, վերջին զանգի, ուսուցչի օրվա, ամանորյա նվերների, և այլ միջոցառումների կապակցությամբ ծախսվել է 1760.0հազար դրամ:

Մեծ ուշադրություն է դարձվում թոշակառուներին և երիտասարդության հետ տարվող աշխատանքներին՝ նրանց հանգիստը նորմալ կազմակերպելու նպատակով:

Կազմակերպվել է տարբեր միջոցառումներ՝ հանրապետության տոնի օրվան նվիրված, ծաղկեպսակներ է դրվել հայրենական մեծ պատերազմում և արցախյան ազատամարտում զոհվածների հուշարձանին:

Ուշադրության կենտրոնում է գտնվում սպորտի զարգացում: Գյուղապետի ամենօրյա ուշադրության կենտրոնում է նաև առողջապահության ոլորտը: Աջակցում է սանիտարահիգիենիկ վիճակի բարելավմանը, հակահամաճարաքային միջոցառումների իրականացմանը: Վերահսկում է առողջապահական հիմնարկի աշխատանքները:

Համայնքում գործում է «Խնամակալության և հոգեբարձության», հանձնաժող, որի հիմնական խնդիրը քափառաշրջիկ, անօթևան երեխաների հայտնաբերումն ու դաստիարակումն է: Ի ուրախություն մեզ համայնքում նման երեխաներ չկան: Ուշադրության կենտրոնում է գտնվում սոցիալապես տնայաբնակ ընտանիքները, որոնց տրվել է ֆինանսական օգնություն: Տարվա ընթացքում համայնքի շտաբում սոցիալապես անապահով ընտանիքների, տրվել է դրամական օգնություն 1320.0 հազար դրամ:

Համայնքում հաշվառված են 150թոշակառուներ այդ թվում 127 ծերության և աշխատանքային: Է-ի կերակրողը կորցնողի, 22-ը հաշվանդամության: Նպաստառու ընտանիքների թիվը կազմում է 25: Թոշակները և նպաստները տրվում են ժամանակին:

Համայնքում բարձր է պատասխանատվությունը գորակոչիկների նկատմամբ: Զորակոչից խուսափողներ չկան:

2013թվականին համայնքում կատարվել է հսկայածավալ աշխատանքներ:

Փողոցների ընթացիկ վերանորոգման համար ծախսվել է 950.0 հազար դրամ:

Համայնքի փողոցների 60%-ից ավել շերենապատվել է:

Կատարվել է խմելու ջրագծերի մասնակի վերանորոգում:

Համայնքի տնտեսությունների թիվը 350, բնակչության թիվը 1810 մարդ գյուղատնտեսության մեջ զբաղվում են՝ 1050 մարդ:

Տարվա ընթացքում համայնքում ծնվել են 20 երեխա, մահացածների թիվը՝ 12:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

2013թ. տարեկան հավաքագրվել է եկամուտներ՝

հազար դրամ

N	անվանումը	տարեկան պլան	2013թ.տարեկան		կատարողական %
			պլան	փաստացի	տարեկան
1	հողի հարկ	6500.0	6500.0	6512.5	100.1%
2	գույքահարկ	1543.0	1512.5	1728.5	112%
3	տեղական տուրքեր	164.6	164.0	127.6	77.8%
4	ոչ հարկային եկամուտներ	1946.0	1790.0	1871.9	96.1%
5	պետ. բյուջեից տրամադրվող դոտացիա	19313.9	19313.9	19313.9	100%
6	պետ. բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (տուրվենցիաներ)	472.1	472.1	276.0	58.4
	ընդամենը վարչական բյուջե	29939.0	29939.0	29830.4	99.6%
7	հողի օտարումից մուտքեր	-	-	2481.1	-
8	տարեսկզբի ազատ մնացորդ	7183.6	7183.6	7183.6	-
	Ընդամենը	37122.6	37122.6	39495.1	106.3%

Բերված աղյուսակից երևում է, որ համայնքի վարչական բյուջեի եկամուտների վարչական բյուջեի գծով ընդամենը 2-րդ կիսամյակում հավաքագրվել է եկամուտների 99.6%, ընդամենը եկամուտները 106.3% 2013թ. 2-րդ կիսամյակում կատարվել է ծախսեր հետևյալ ուղղություններով՝

հազար դրամ

N	Ծախսերի անվանումը	2013թ. տարեկան		կատարողական %
		պլան	փաստացի	
1	տեղական ինքնակառավարում	18189.1	16848.9	52.6%
2	Համայնք. այլ ծառ.	828.0	482.7	58.2%
3	աղբահանություն	420.0	337.5	80.3%
4	մշակույթ սպորտ և ռադ.հեռ.հաղ.	2698.2	1960.0	72.6%
5	ճանապարհների վերանորոգում	950.0	950.0	100%
6	կրթություն	3010.0	2535.4	84.2%
7	ջրամատակարարում	1700.0	1500.0	88.2%
8	Սոց. օգնություն	1800.0	1320.0	73.3%
9	արտաքին լուսավորում	100.0	—	—
10	պահուստային ֆոնդ	243.7	—	—
11	ֆոնդային բյուջե	7183.6	0	—
	Ընդամենը	37122.6	25934.5	69.8%

«Քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քննարկման կարգի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի պահանջի համաձայն, Արագածի գյուղապետարանում տարվա ընթացքում ստացվել է 93 դիմում:

Դիմումներում բարձրացվել են սոցիալական, ֆինանսական, հողային, շինարարության և այլ բնույթի հարցեր, որոնք սահմանված կարգով քննարկվել են և տրվել են պատշաճ լուծումներ:

Ընթացիք ժամանակահատվածում գյուղապետարանում ստացվել են 112 գրություն, հղվել է 138 պաշտոնական գրություն: Քաղաքացիներին տրվել է 313 տեղեկանքներ: Տրվել է համայնքի ղեկավարի 20 կարգադրություն և կայացվել է համայնքի ղեկավարի 32 որոշում:

2013թ. տարվա ընթացքում գյուղապետարանի աշխատակիցների փաստացի թվաքանակը կազմել է 11 մարդ, որից 5-ը համայնքային ծառայողներ:

2013թ. դրությամբ աշխատավարձի և սոց վճարումների պարտքեր չկան:

2013թ. կիսամյակի ընթացքում համայնքի ավագանին գումարել է 11 նիստ, որտեղ քննարկվել են համայնքի խնդիրներին վերաբերվող տարբեր բնույթի հարցեր, և կայացվել որոշումներ:

Դեկտեմբերի 24-ին դպրոցում և մանկապարտեզում ամանորին նվիրված համայնքային միջոցառման ժամանակ համայնքի ղեկավարի կողմից երեխաներին բաժանվեց տոպրակներ:


Դեկտեմբերի 25-ին համայնքի մեծահասակներին ևս բաժանվեցին ամանորյա նվերներ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Չնայած, համայնքի բյուջեով նախատեսված է սոցիալ-տնտեսական զարգացման և որոշ ուղղություններով իրականացված միջոցառումներ, սակայն կան հիմնախնդիրներ, որոնց լուծումը հնարավոր չէ իրականացնել միայն համայնքի միջոցներով:

ԱՌԱՋՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՆՆԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻՑ Է

1. Մշակույթի տան հիմնավերանորոգում
2. Խմելաջրի ցանցի հիմնավերանորոգում
3. Մանկապարտեզի ջեռուցումը
4. Երկու խորքային հորերի վերաբացում՝ որով կլուծվի 150 հա հողատարածքի ոռոգման հարցը
5. Գյուղտեխնիկայի ձեռք բերում (տրակտոր և գյուղգործիքներ)


ԱՐԱՋԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՒՂԵՐՉ
Արագափի գյուղական համայնքի
ընդհանուր ժողով

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՄԱՐԶՊԵՏ

Համայնքի ընդհանուր ժողովում բնակիչների և ավագանու կողմից հարց բարձրացվեց ուղերձով դիմել Ձեզ՝

1. Մշակույթի տան հիմնավերանորոգման հարցը ընդգրկել պետական կամ որևիցե այլ ծրագրում:
 2. Համայնքի խմելաջրի ցանցի հիմնավերանորոգում:
 3. Մանկապարտեզի ջեռուցման հարցը:
 4. Երկու խորքային հորերի վերաբացում՝ որով կլուծվի 150հա հողատարածքի ոռոգման հարց:
 5. Գյուղատեխնիկայի ձեռք բերում (տրակտոր և գյուղգործիքներ):
- Խնդրվում է Ձեր միջնորդությունը առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ:

ԱՐԱՋԱՓԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝  Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ